ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 4, հեռ.՝ (+374 60) 830 840, (+374 60) 830 850
Էլ-փոստ՝ info@competition.am, վեբ կայք՝ http://www.competition.am

«21» 05 2024թ.
No 005552

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ
ՊԱՐՈՆ ՅԱԿՈԲ ՏԷՐ ՆԵՐՍԷՍԵԱՆԻՆ
(հասցե՝ ք. Երևան, Շենգավիթ, Սողոմոն Տարոնցի նրբ. 6, 10,
էլ. փոստի հասցե՝ georges.hakop@mail.ru)

Հարգելի՛ պարոն Տէր Ներսէսեան,

Կից ուղարկվում են Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) նախագահին ժամանակավոր փոխարինողի 2024 թվականի մայիսի 16-ի «Դիտանցում իրականացնելու մասին» թիվ 288-Ա հրամանի պատճենը և 2024 թվականի մայիսի 17-ին կազմված «Դիտանցման արդյունքների վերաբերյալ» թիվ 288 արձանագրությունը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Հանձնաժողովին փաստաթղթեր ներկայացնել և ստանալ, ինչպես նաև Հանձնաժողովի հետ հետագա ողջ հաղորդակցությունը կարող եք իրականացնել նաև առցանց՝ Հանձնաժողովի e-Compete էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ **Համակարգ**) միջոցով, որի համար անհրաժեշտ է գրանցվել համակարգում՝ մուտք գործելով Հանձնաժողովի պաշտոնական կայքի (www.competition.am) «Իմ էջը» բաժին, ընտրելով «Գրանցվել» հրամանը և լրացնելով անձի նույնականացման համար պահանջվող տվյալները:

Առդիր՝ «9» թերթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ԱՇՈՏ ՎԱՀԱՆՅԱՆ**

Կատարող՝ Ռոբերտ Ղարիբյան
Անբարեխիղճ մրցակցության վերահսկողության վարչություն
Հեռ. (+374 60) 830-840 (243)

competition.am կայքում հրապարակման օրը՝ 5 հունիսի 2024 թվական:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ

Հ Ր Ա Մ Ա Ն

16 մայիսի 2024 թվականի N 288 Ա

ԴԻՏԱՆՑՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) նախագահի 2024 թվականի մայիսի 10-ի թիվ 267-Ա հրամանը, Հանձնաժողովի անբարեխիղճ մրցակցության վերահսկողության վարչության պետ Արեգ Հովհաննիսյանի և նույն վարչության տնտեսավարող սուբյեկտների անբարեխիղճ մրցակցության վերահսկողության բաժնի ավագ մասնագետ Ռոբերտ Ղարիբյանի 2024 թվականի մայիսի 15-ի թիվ ՄՊՀ-005316 զեկուցագիրը և ղեկավարվելով «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի 51-րդ հոդվածի 1-4-րդ մասերով և Հանձնաժողովի 2021 թվականի նոյեմբերի 9-ի թիվ 327-Ն որոշման հավելվածի 10-րդ կետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հանձնաժողովի անբարեխիղճ մրցակցության վերահսկողության վարչության տնտեսավարող սուբյեկտների անբարեխիղճ մրցակցության վերահսկողության բաժնի ավագ մասնագետ Ռոբերտ Ղարիբյանին «ՀԱԿՈԲ, HAGOP» և «Hagop» (Hagop) բառը պարունակող ապրանքային նշանների («Hagop Rest & Cafe», «Hagop Restaurant & Cafe by Oriento», «Hagop Restaurant & Cafe», «Hagop by Oriento») ցանկացած (լրիվ կամ մասնակի) եղանակով օգտագործման փաստը պարզելու նպատակով անհատ ձեռնարկատեր Յակոբ Տէր Ներսէսեանին (իրավաբանական հասցե՝ ք. Երևան, Շենգավիթ, Սողոմոն Տարոնցի նրբ. 6, 10, ՀՎՀՀ՝ 35224729) պատկանող ք. Երևան, Պուշկին 48 հասցեում գործող հանրային սննդի օբյեկտում 2024 թվականի մայիսի 17-ից մինչև 2024 թվականի մայիսի 31-ը ներառյալ ընկած ժամանակահատվածում լուսանկարելով առնվազն մեկ անգամ իրականացնել դիտանցում:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՓՈԽԱՐԻՆՈՂ Տ. ՄԱՐԿՈՍՅԱՆ

2024 թ. մայիսի 16
Երևան

Հավելված 1
Մրցակցության
պաշտպանության հանձնաժողովի
2021 թվականի հունիսի 8-ի
թիվ 87-Ն որոշման

ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 288

ԴԻՏԱՆՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հսկիչ ՇՌԱՀՄՎ բաժնի ավագ մասնագետ Ռոբերտ Պարիկյան
(դիտանցում իրականացնող անձի՝ դիտանցում իրականացնելու վերաբերյալ հրամանում նշված տվյալները)

կողմից Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի նախագահի «16» «մայիսի» 2024թ. N 288 հրամանի՝ հիման վրա

ԱՁ Հակոբ Մհեր Ֆերեշեթյան (ք. Երևան, Աղբյուր Սերոբի փող. 6, 10, ՀՎՀՀ՝ 35224729)
(տնտեսավարող սուբյեկտի անվանումը) (հասցեն, ՀՎՀՀ, առկայության դեպքում՝ հեռ. համարը)

մոտ ք. Երևան, Պուշկին 48 հասցեում գործող հանրային սննդի օբյեկտում
(դիտանցման իրականացման վայրը)

իրականացվեց դիտանցում:

Դիտանցման արդյունքում պարզվեց հետևյալը.
Հանրային սննդի օբյեկտի ճակատային հատվածում՝ շենքի վրա, առկա է «ՀԱԿՈԲ / HAGOP» գրառմամբ արտաքին գովազդ: Բացի այդ՝ հանրային սննդի օբյեկտի ճակատային հատվածում պատի վրա, փակցված է «HAGOP BY ORIENTO REST & CAFE» գրառմամբ պաստառ: Հանրային սննդի օբյեկտի ներսում, ինչպես նաև շենքի ճակատային հատվածում տեղադրված ճաշացանկերի վրա օգտագործված են «HAGOP Rest & Cafe» գրառումները:
Շեֆ խոհարար Հակոբ Ֆերեշեթյանի բանավոր հայտարարության համաձայն հանրային սննդի օբյեկտում օգտագործվող վերոնշյալ բոլոր արտահայտությունները փոխառնված են «Հակոբ / Hagop Օրիենտո / oriento» արտահայտությամբ:
Շեֆ խոհարար Հակոբ Ֆերեշեթյանի բանավոր հայտարարության համաձայն ԱՁ Հակոբ Մհեր Ֆերեշեթյանը չի ստացել հանձնաժողովի կողմից կայացված պատասխանատվության միջոց կիրառելու մասին որոշումը:

Դիտանցման ընթացքում տեսաձայնագրում չի իրականացվել
(իրականացվել է, չի իրականացվել)

Դիտանցման ընթացքում լուսանկարահանում իրականացվել է
(իրականացվել է, չի իրականացվել)

Դիտանցման ընթացքում կիրառված տեսանկարահանող կամ լուսանկարահանող միջոցների վերաբերյալ տվյալները (տեսակը, մակնիշը և մոդելը).

սմարթֆոն Xiaomi Redmi 11 PRO

Արձանագրությանը կցվող լուսանկարներ, փաստաթղթեր, էլեկտրոնային կրիչներ և (կամ) այլ նյութեր՝

թվով 6 լուսանկար

(կցվող լուսանկարների, փաստաթղթերի, էլեկտրոնային կրիչների, այլ նյութերի քանակը թվերով)

Մինչև արձանագրության կազմումը դիտանցմանը խոչընդոտելու դեպքերը և անձինք՝

—

Դիտանցման արդյունքում կազմվեց սույն արձանագրությունը երկու օրինակից:
Տնտեսավարող սուբյեկտի աշխատող կամ այլ ներկայացուցիչ, այդ թվում՝ նրա անունից ապրանքներ վաճառող, առաքող կամ հանձնող, ծառայություններ մատուցող կամ դրամական հաշվարկ կատարող անձ՝

ԶԳՖ հաշվապահ Անժել Օհանյան Համլետ [illegible]
(պաշտոնը, անունը, ազգանունը, ստորագրությունը)

Դիտանցման ընթացքի կամ արդյունքների վերաբերյալ

Չունեմ առարկություններ ԶԳՖ հաշվապահ Անժել Օհանյան Համլետ [illegible]
(պաշտոնատար անձի պաշտոնը, անունը, ազգանունը, ստորագրությունը)

Ունեմ առարկություններ
(պաշտոնատար անձի պաշտոնը, անունը, ազգանունը, ստորագրությունը)

Առարկությունները կցվում են (առդիր ________ էջ)

Ստացա արձանագրության օրինակը

—
(պաշտոնատար անձի պաշտոնը, անունը, ազգանունը, ստորագրությունը)

Արձանագրության օրինակը տնտեսավարող սուբյեկտին չհանձնելու պատճառը

դիտանցման վայրից ԱՁ [illegible] բացակայությամբ

Արձանագրությունը կազմեց (կազմեցին)

Ռոբերտ Պարիբյան [illegible]
(անունը, ազգանունը, ստորագրությունը)

«17» «մայիսի» 2024թ.

HAGOP
HAGOP BY ORLENTO REST & CAFE

HAGOP BY ORIENTO
CAFE & REST.

HAGOP
Rest&Café
SANDWICHES | ՍԵՆԴՎԻՉ
1300 CHICKEN SHAWARMA | Հավի շաուրմա
1600 BEEF SHAWARMA | Տավարի շաուրմա
1400 SHISH TAWOUK | Շիշ տավուկ
1400 ALLEPO KEBAB | Հալեպի քյաբաբ
1500 TIKA | Թիքա
1400 GAWURMA | Ղավուրմա
1300 MEXICAN | Մեքսիկական
1300 FAJITAS | ՖԱՋԻՏԱՍ
1500 PHILADELPHIA | Ֆիլադելֆիա
1300 CHICKEN SUB | Հավով Սաբ
1500 STEAK SUB | Սթեյք Սաբ
1500 TNT CHICKEN SANDWICH
TNT Հավով Սենդվիչ
1400 CREAMY CHICKEN
Հավի միս սերուցքային սոուսով
1600 CREAMY BEEF
Տավարի միս սերուցքային սոուսով
800 FALAFEL | Ֆալաֆել
1800 ARABIC FALAFEL | Արաբական Ֆալաֆել
1600 CHEF HAGOP'S BOMB SANDWICH
Բոմբ Սենդվիչ Շեֆ Հակոբից
1600 ANASTASIA CHICKEN SANDWICH
Անաստասիա Հավով Սենդվիչ
TEL.: +374 93 83 56 13, 055 33 22 02

HAGOP
Rest&Café
ORIENTAL MENU

HAGOP
Rest&Café
EUROPEAN MENU

ORIENTAL MENU

HAGOP
Rest&Café

BURGER | ԲՈՒՐԳԵՐ



1300	CLASSIC BURGER	Կլասիկ Բուրգեր
1300	SIRYAN BURGER	Սիրիական Բուրգեր
1500	MUSHROOM BURGER	Սնկով Բուրգեր
1400	TNT CHICKEN BURGER	TNT Հավով Բուրգեր
1500	TNT BEEF BURGER	TNT Տավարի Բուրգեր
1300	SUJUKH BURGER	Սուջուխ Բուրգեր
1300	GRILLED CHICKEN BURGER	Խորոված Հավով Բուրգեր
1300	CRISPY CHICKEN BURGER	Խոխոթան Հավով Բուրգեր
1500	BURGER WITH EGG AND CHEESE	Բուրգեր ձվով և պանրով
1600	CHEF HAGOP'S BOMB BURGER	Բոմբ Բուրգեր Շեֆ Հակոբից

Delivery | Առաքում

TEL.: +374 93 83 56 13, 055 33 22 02